

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՌ.

ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆԸ  
ՅՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Յ Ե Վ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԻ-Ի № 46.

ՅԵՐԵՎԱՆ

1926

23.07.2013

25.02.3

15 JAN 2010 831588

331.881

7-97

шнр

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

N=6

331.881	1002
7-97	331583
и	зрн
Иллюстрации	
092	28/18/15
	Ф. Симонян

## ԳՐՈՒԹԻՒՆԹՅՈՒՆ

Յ Ե Վ.

## Ն Ր Ա Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր Ը

1002 394  
331583

Առա. բարգ. 2. ՀԱՐԿՎՅԱՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՄԽՈՒՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ № 46.

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1926.

Այնուհետև միությունը բավարարում է և բանվորների կրթուրական պահանջները: Բանվորները ցանկում են սովորել, կարգալ, հանգստանալ ու բավականություն ստանալ թատրոններում և կինոներում: Նրանց ընդառաջում է արհմիությունը: Իսկ արտասահմանում ընդհակառակը—բուրժուազիան ամեն կերպ աշխատում է մթագնել, բթացնել բանվորների գասակարգային գիտակցությունը, մասսային կտրել գասակարգային պայքարից, բանվորներին բուրժուական կարգերի հույս հպատակը դարձնել: Մեզ մոտ միությունը բանվորներին տրամադրում է ակումբներ, գրադարաններ, ընթերցարաններ, «կարմիր անկյուններ»: միաժամանակ նա ոգնում է, վոր այլտեղ կուլտուրական աշխատանքը լավ հիմքերի վրա դրվի, բանվորների գասակարգային գիտակցությունը զարգանա:

Տեսանք, վոր միությունները աշխատանք են տանում բարեկափելու իրենց անդամների անտեսական դբությունը և միաժամանակ բավարարելու նրանց կուլտուրական աղանջները: Այդ աշխատանքների ժամանակ միությունը գործում է վոչ թե հբամաններով, այլ աշխատանքների մեջ են քաշում իրենց—միության անդամներին: Բայց դժբախտաբար մենք բոլորս հավասար չափով զարգացած ու կուլտուրական չենք: Հարկավոր է հետամենացներին կըրել, դասիստակել և հավասարեցնել ավելի գիտակցներին: Հարկավոր է բանվորներին մասնակից անել միութենական կյանքին, սովորեցնել նրանց ժողովների ժամանակ արտահայտվել, ճիշտ վճռել պատահած դժգոհություններն ու դժվարությունները, հարկավոր է ոգնել, վոր կարողանան վճռել հազար ու մի հարցեր, մի խոսքով՝ բանվորներին վարժեցնել հաստակական աշխատանիքի: Միությունը հետաքրքրվելով և պաշտպանելով բանվորների շահերը՝ միաժամանակ բացում է մեր աշքերը, բարձրացնում է մեր կուլտուրական մակարդակը, համախմբում է մեզ մի հաշտ ու խաղաղ ընտանիքի մեջ: արհմիությունը

գիտակցորեն պայքարում է բանվոր դասակարգի առաջը բրված խնդիրներն իրականացնելու և նպատակներին համելու համար:

## ՈՒ ՅԵՐԻ ԼԱՆԻՑ Ե ՄԻՌԻՉՅԱՆ ԱՆԴԱՍ

Այժմ ԽՍՀՄ-ի արհմիությունները Շմիլիոնից ավելի մարդ են համախմբում: Յեթե այդ հսկայական թվով մարդկանց կանոնացնեցնենք մի շարքի՝ մեկը մյուսից կես արջին հեռու, այդ շարքը ամբողջ 2400 վերստ յերկարություն կունենա: Վորովհետեւ մեր արդյունաբերությունը անընդհատ աճում է և ուրեմն մեծանում աճում է այդ արդյունաբերության մեջ աշխատող բանվորների թիվը, ապա ուրեմն, կասկած չկա, վոր հետագայում մեր միությունների անդամների թիվը ավելի շատ պիտի մեծանա:

Մեր միությունների մեջ յեղած բոլոր ընկերներն ել միաժամանակ չեն մտել միության մեջ: Նրանցից վոմանք վաղուց չե, վոր միության անդամ են, ուրիշները մի քանի տարի տուած են մտել, իսկ շատերն ել միության անդամ են դեռ հոկտեմբերյան հեղափոխության որերից, ուրեմն՝ 8 տարվա միութենական ստաժ ունեն և վերջապես կան ընկերներ, վորոնք միության մեջ են յեղել դեռ հեղափոխությունից առաջ: Այս վերջիններիս թիվը մեծ չե, վորովհետեւ մինչև 1917 թվի Փետրվարյան հեղափոխությունը շատ քիչ միություններ կային և յեղածներն ել համեմատաբար քիչ թվով բանվորներ եյին համախմբում: Խորհրդային իշխանությունը միությունների գոյության ու զարգացման համար շատ բարենպաստ պայմաններ ուղղեցից, զրա համար ել այժմ բանվորների ձնշող մեծամասնությունը միությունների անդամ են:

ԻՆՉՈՒ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ ԲՈԼՈՐ ԲԱՆ-  
ՎՈՐՆԵՐԸ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԶԵՅԻՆ

Ի հարկե, հեղափոխությունից առաջ անկազմակերպ բանվորները անհամեմատ շատ եյին, փորովհետեւ ցարական կառավարությունը դաժանորեն ձնշում եր բանվորական կազմակերպությունները։ Այդ ժամանակ բանվորը շատ մեծ գիտակցություն պիտի ունենար, փոք միության մեջ մտներ, իսկ այդպիսի գիտակից բանվորներ, ի հարկե, շատ չկային։ Աւրեմն—յեթե բանվորների մեծամասնությունը չեր կազմակերպվել միությունների մեջ, դրա պատճառը ցարական վայրենի ու սոսկալի ռեժիմն եր բանվոր գասակարգի համար։

1905 թվից հետո միայն, բանվորների հեղափոխական շաբթման ուժեղացման շնորհիվ, յերեան յեկան միությունները։ Սակայն 1905 թվի հեղափոխության պարտությունից հետո ցարական իշխանությունը ցիր ու ցան արեց միություններից շատերը։ Այն միությունները, փոքնք դրանից հետո ել պահեցին իրենց գոյությունը, ըստիպված եյին աշխատել ամենածանր պայմաններում։ Նրանք գտնվում եյին ցարական պահորդների (Ճարահ) արթուն հսկողության տակ, փոքնք ամենաչնչին առիթով, ամենահասարակ պատճառով փակում եյին միությունները։ Բանվորներին թույլ չեյին տալիս բացահայտ կերպով միություններ կազմել, համախմբվել, դրա համար ել ավելի գիտակից բանվորները քաշվեցին գաղտնաբանները, փոք պեսզի այդտեղից պայքարեն բանվոր գասակարգի փայշուն ապագայի համար։

ԱՅԴ ԺԱՄԱՆԱԿ ԻՆՉ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՐ  
ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄՏՆՈՂԸ.

Հեղափոխությունից առաջ բանվորի համար ահազին գժվարություն եր միության մեջ լինելը։ Միության ան-

դամները հազար ու մի բծախնդրության ու կամայականության եյին յենթարկվում թե գործարանի վարչության և թե նրա սպասավոր վոստիկանության ու պահնորդների կողմից։ Ի հարկե, այդ ժամանակ միությունը մեկ հարյուրերորդ մասն ել չեր տալիս այն ամենի, ինչ փոք տալիս ե այժմ—Խորհրդային իշխանության ժամանակ։

Միավետության տապալումից հետո բանվորական կազմակերպությունները գուրս յեկան իրենց գաղտնաբաններից, փորովհետեւ նրանց համար ազատ գործելու հարավորությունները ստեղծվեցին։ Սկսեցին վերածնվել նախկին միությունները և դեռ բազմաթիվ նորերն ել կազմակերպվեցին։ 1917 թվի Հոկտեմբերին, յերբ փոք բանվոր գասակարգը իր կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ իր ձեռքը գցեց իշխանությունը, այդ ժամանակ արգեն լիակատար համարվորություններ ստեղծվեցին՝ միութենական ազատ ու անարգել աշխատանք տանելու համար։ Այժմ արգեն, ութ տարի հետո, միությունները բանվոր գասակարգի հզոր ու կազմակերպված ուժն են հանգիստանում։

ԻՆՉՈՒ ՅԵՆՔ ՄՏԵԼ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մեղանից շատերը միության մեջ են մտել բոլորովին գիտակցաբար, շատ լավ հասկնալով այն խնդիրները, փոք գրված են բանվոր գասակարգի առաջ։ Մենք գիտենք, փոք մեր թշնամիները դեռ ջախջախված չեն։ Նրանցից դեռ շատ կան թե արտասահմանում և թե մեր յերկրի ներսում։ Այդ թշնամիները շատ լավ կազմակերպված են։ Նրանց վերջնականապես ջախջախելու համար բանվոր գասակարգը դեռ շատ մեծ աշխատանք պիտի կատարի։ Շատ թե քիչ յերկարատեւ ու կազմակերպված պայքարից հետո միայն՝ մենք կարող ենք վերջնականապես հաղթող դուրս գալ ու ընդմիշտ հիմք դնել մեր գեղեցիկ ապագային Ահա հենց այդ նպատակով ել համախմբում ե մեզ միու-

թյունը։ Համախմբում ե, վոր միացյալ պայքարով հողաթենք մեր ճանապարհի բոլոր խոչընդուները, վորպետզի հասնենք մեր միության վերջնական նպատակին—այն եւ կօմունիստական հասարակությանը։ Այդ նպատակին հասնելու ճանապարհը այնքան ել կարծ չե, որա համար հարկավոր ե վճռել մի շարք հիմնական խնդիրներ, վորոնք կապված են մեր ժողովրդական տնտեսության զարգացման ու բանվորների դրությունը լավացնելու հետ։ Ուրեմն ել ովք կը հրաժարվի միության անդամ լինելու—մարդկության փայլուն ապագայի համար պայքարող մարտիկ լինելու պատվից և միության ոգնությունից։ Դրա համար ել շատ պարզ ե, վոր բոլոր բանվորներն աշխատում են մտնել արհեստակցական ընտանիքի մեջ, վորպես նրա իրավահավասար անդամ։ Ի հարկե, միայն բանվորները չեն աենում այն կենսական առավելությունները, վոր տալիս ե միության անդամներին իրենց կազմակերպությունը։ Բոլոր տերերն ու աղաներն ել կուզեյին մի կերպ միության մեջ ընկնել, վորպեսզի ոգտվեն միության անդամի իրավունքներից։ Բայց միությունը պայքար ե մղում նրանց գեմ և իրավունք չի տալիս մտնել միության շարքերը։

Ով վոր միության մեջ մանելու իրավունք ունի, դա գեռ չի նշանակում, թե նա պարտավոր է անպատճառ լինել միության մեջ։ Դա թողնված է հենց իրենց՝ բանվորների կամքին։ Սակայն շատ քիչ բանվորներ կան, վոր հրաժարվում են այդ իրավունքից։ Մեզ մոտ անկազմակերպ բանվորները քիչ են։ 100-ից 8-ը հազիվ լինի անկազմակերպ։ Դրանք ել այն բանվորներն են, վորոնք ամենահետամեջն են ու գեռ չեն հասկանում իրենց շահերի։ Ի հարկե, միությունը այդպիսի բանվորներին բախտի կամքին չի թողնում, այլ նրանց մեջ կուլտ-կրթական աշխատանք ե առնում և աշխատում է նրանց ել

քաշել իր շարքերը։ Կասկած չկա, վոր մոտ ապագայում շատ քիչ կճարվեն անկազմակերպ բանվորներ։

Միությունն ունի իր կանոնները—իր կանոնադրությունը, վորը սահմանում, վորոշում ե միության նպատակներն ու անելիքները, նրա կազմը, աշխատանքի ձևերը, ինչպես և միության անդամների իրավունքներն ու պարտականությունները։ Կանոնադրությունը ճիշտ կերպով վորոշում ե, թե ով իրավունք ունի միության անդամ լինելու։

#### ՈՎ ԿԱՐՈՂ Ե ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԼԻՆԵԼ

Միության մեջ ընդունելու հիմնական պայմանն այն է, վոր ընդունվողը վարձու աշխատավոր լինի, պատկանի բանվորական դասակարգին։

Միության մեջ ընդունվում են վարձու աշխատավոր բանվորական և ծառայողներ, անկախ նրանց սեւից։ (աղամարդ թե կի՞ն) հասակից, ազգությունից, բայց աշխատավոր և կրոնական համոզմութեներից։ Հարկավոր է միայն, վոր միության մեջ մտնողը ընդունի միության կանոնադրությունը և յենթարկվի միության գիցիցիլինացին (կարգապահությանը)։

Բանվորի ազգությունը վոչ մի նշանակություն չի կարող ունենալ այն պայքարի համար, վոր մղում ե միությունը։ Հավասար չափով պաշտպանության կարիք են զգում բոլոր բանվորները—ինչ ազգից ել լինեն նրանք—ուուս, հայ, վրացի, թուրք և այլն։ Բանվոր դասակարգի թշնամիներն ամեն կերպ աշխատում են թուլացնել բանվորների կարողությունը, նրանց հզորությունը։ Դրա համար նրանք բորբոքում են ազգային ատելության ու թըշնամության զգացմունքը, իսկ այդ զգացմունքը բանվորներն ստացել են կապիտալիստական կարգերից։ Միությունն աշխատում ե արմատախիլ անել, վերացնել այդ զգացմունքը անցյալի այդ թունոտ մնացորդը և իսկապես,

նա մեծ հաջողություն և ունենում, խորհրդային իշխանության ժամանակ—այս վերջին ութ տարիների ընթացքում բանվորներն արդեն սովորել են ընկերական վերաբերմունք ցույց տալ իրար՝ անկախ այն բանից, թե ինչ ազգից են նրանք:

Միությունը չի հետաքրքրվում բանվորի հավատով. բանվորը գնում է յեկեղեցի թե չի գնում՝ միևնույն եւ գործարանատերերը միատեսակ շահագործում են և հավատացյաներին և վոչ հավատացյաներին, հետեւապես, միությունն ել իր շարքերը պիտի ընդունի և սրանց և նրանց: Ասենք, այժմ խորհրդային յերկրներում բանվորներն ազատվել են կրօնական նախապաշարմունքներից, վորն առաջ բուրժուագիւն ոգտագործում եր իր շահերի համար: Աստծուն հավատալը անգիտակից լինելու հետեւավանք ե, իսկ միությունը անմիջական նպատակ ե դրել բարձրացնել բանվորի գիտակցությունը և մերկացնել, յերեան հանել բուրժուական ամբողջ խարեյությունը: Ահա զրա համար ել միությունն իր գուները չի փակում հավատացյաների առաջ:

Միության անդամ կաբող են լինել և ծերը և յերիստարդին ու պատաճին, և կիմոն և տպամարդ, միայն թե նրանք փարձու աշխատանք տանելիս լինեն, իրենց բանվորական ուժը վաճառելով ապրեն: Բանվորական ուժը վաճառողների շահերը միատեսակ են, անկախ նրանց սեռից, հասակից, ազգությունից, կրօնական հավատքից ու նրանց խաղախական համեստությունից:

Յեթե բանվորներից վորեկ մեկը սխալ քաղաքական համոզմունք ունի, զրա պատճառն այն ե, վոր նա չի հասկանում, անգիտակից ե: Ի հարկե, մեծ սխալ կլիներ, յեթե մենք թույլ շտայինք, վոր այդպիսի մոլորված ընկերը միության մեջ մտնի: «Ա, իմի՞ւրի յրուն կունուիրմի դպրոց ե», ասում ե կենինի հոչակավոր լուզունդը: Ամեն մի դպրոցի առաջին ու հիմնական նպատակն ե մի բան

սովորեցնել, իսկ սովորեցնել պետք ե ամենից առաջ չզիսցողներին, անգիտակիցներին և քիչ գիտակիցներին: Միությունը բանվորներին դասակարգային կրթություն ու դաստիարակություն տալու դպրոց ե, նա շահագրգրոված ե, վոր իր գուներն ազատորեն բաց լինեն բոլոր բանվորների առաջ, վորոնց թվում և նրանց առաջ, վորոնք իրենց գիտակցությամբ ցած են կանգնած մյուսներից: Լենինը նույնպես ասում եր, վոր միության մեջ աշխատավոր մասսաներն առողջանաբար անկուսակցական վիճակից բարձրանում են գեղի կոմունիզմը: Ուրեմն՝ միությունը դաստիարակում ե այն բազմամիլիոն բանակը, վոր խորհրդային իշխանությունն ու կոմունիզմի ազագաշենքն ե կառուցում:

Ինչպես արդեն ասացինք, միության մեջ ընդունվելու պայմանն այն ե, վոր մանողը լինունի կանոնադրությունը յեն յենքարելի միութենական դիսցիպլինային (կարգ ու կանոնին): Ով չի ընդունում միության կանոնագրությունը, նա մերը չե: Բանվորների կազմակերպված պայքարը հենց նրանով ել տարբերվում ե անկազմակերպից, վոր առաջին գեղում պայքարին մասնակցող բոլոր բանվորներն ինքնակամ և գիտակցորեն յենթարկվում են իրենց կազմակերպության բոլոր կանոններին: Յերե այդպես չինի, այն ժամանակ ել կազմակերպություն չի լինի, այլ կինի անկարգ ու անկանոն կերպով հավաքված մարդկանց մի խումբ, մի ամբոխ, վորն անզոր կինի պայքարելու իր շահերի համար:

Միության մեջ կազմակերպված բանվորները, ամենից առաջ, կապված են իրար հետ միանման դաստիարակային շահերով: Հենց այդ ե միության աշխատանքների հաջողության գրավականը և զրա համար ել միությունը չի կարող թույլ տալ, վոր իր շարքերը մանեն այնպիսի մարդկեց, վորոնց դաստիարագային շահերը սարեց են. չեն համեստասխանում միության նպատակներին ու խնդիր-

12

Ներին։ Վորպեսզի այդպիսի մարդիկ հնարավորություն չունենան միության մեջ խցկելու, կանոնադրությունը մեկ առ մեկ թվում ե, թե ում չի կարելի ընդունել միության մեջ։

Ահա պարզենք, թե ովքեր չեն կարող միության անդամ լինել։

### ՈՒՄ ԶԵՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵջ

Միության անդամ լինելու իրավունիք չունեն—նախկին ձեռնարկատերը, առեվտրականիները, սեփականակիցները (յերկու կամ մի քանի հոգով սեփականություն ունեցողները), հավատարմատաները (ՃՕՅԵՐԻ և ՀԱՅԱ), կապալառուները, կոնցեսիոներները, առեվտրական յեվ լիանուականական միջնորդները յեվ բնիդանապես այն մարդիկ, վորոնիք անաւշաւ յեկամուտով են ապրում։ Վորպես բուրժուական դասակարգին պատկանող մարդիկ՝ սրանց շահերը միանգամայն հակառակ են բանվորների շահերին։ Դրանք մեր դասակարգային քենամիներն են, վորոնիք ապրում են բանվոր դասակարգի հաւելին։ Միութենական կազմակերպությունների աշխատանքը զլիսավորապես հանց սրանց գեմ ե ուղղված։ Ինքնին հասկնալի յե, վոր վոչ մի գեպքում չի կարելի այդպիսի մարդկանց ընդունել միության մեջ։

Այսուհետեւ գալիս են բուրժուազիայի սպասավորները — մասնավոր կապիտալիսական ու կոնցեսիոն ձեռնարկությունների վահանական—ՏԵԽՆԻԿԱԿԱՆ կազմի մարդիկ, վորոնիք իրավունիք ունեն բանվորներ վարձերու յեվ առակելու, ինչպես յեվ ձեռնարկատերի հավատարմատաները։ Այդ մարդկանց համար նույնպես միության գոները փակ են։ Ամեն մի ձեռնարկատերի հավատարմատար, վոր բանվորներ և ընդունում և արձակում, պաշտպանում և իր տիրոջ—մասնավոր կապիտալիստի շահերը։ Յեթե կապիտալիստի նշանակած մարդը լուգ չհակի ու պաշտպանի

իր տիրոջ շահերը, կապիտալիստը նրան գուրս կզցի և կվերցնի մի ուրիշ ավելի աշխատյաժ մարդու։ Մասնավոր ձեռնարկության մեջ թագավորում ե դասակարգային պայմանը և միությունը շատ ճիշտ ե վարփում, վոր իր շարքերը չի առնում մասնավոր կապիտալիստի շահերը պաշտպանողներին։ Բոլորովին այլ բան ենք տեսնում խորհրդային ձեռնարկություններում ու հիմնարկություններում։ Այսաեղ բանվորներ վարձելու և արձակելու իրավունք ունեցող կառավարիչները կարող են լինել միուրյան անդամ։ Պրոլետարական պետությունը խորհրդային տնտեսավայրին հանձնարարում և ժողովրդական տնտեսությունը բարեկամ նորություն ամբողջ բանվոր դասակարգի։ Նա իր անձնական ոգուաների համար բանվորական ուժը շահագործող չե։ Այդպիսի անտեսավարի ու բանվորների շահերը իրարհակառակ չեն, այլ միեւնույնն են։ Նրանց յերկուսի նպատակն ե միասնական պայքարով վերականգնել ԽՍՀՄ-ի տնտեսությունը՝ պրոլետարական հեղափոխությունը վերջնական հաղթանակի հասցնելու համար։



Այսուհետեւ, միության անդամ չեն կարող լինել քրեական հանցագործները, բանտարկվածները, քաղաքացիական իրավունքներից ընդմիշտ կամ ժամանակակից զրկվածները։ Դրանց մասին յերկար խոսելու կարիք չկա, հասկանալի յե, վոր հանցագործներն ու հասարակությանը վտանգավոր մարդեկան չպիտի ունենան բանվորական ամրակուռ կազմակերպության մեջ։

Միությունը իր դռները փակում է նաև բոլոր կրոնների նոգեվորականության առաջ—լինեն նրանք քահաննա, քարոզիչ, բարբի, մոլլա թե այլ հոգեորական։ Հոգեվորականությունը միշտ էլ բուժուազիայի ոգնականն է աշխատավոր մասսաներին ձնշելու դործում։ Նա աշխատա-



վորության ազատագրման ամենաթուներից մեկն է։ Միությունն իր կրթական աշխատանքներով պայքարում է կրտսի շշմեցնող ու բթացնող թույնի դեմ և, ի հարկե, չի կարող իր շարքերն ընդունել այդ թույնը սարածողներին։

Միանգամայն հասկանալի պատճառով արգելված է միության մեջ ընդունել նաև հին ռեժիմի հավատարիմ ու ակատիվ պաշտպաններին։ ցարական վոստիկանության պաշտոնյաներին պահուղներին, ժանդարմների հա-

առակ կորպուսին և ակտիվ սպիտակի—զվարդիականներին, վորոնք զրկված են քաղաքացիական իրավունքներից։


Վերել թված բոլոր մարդիկ, այսպես թե այնպես, բանվոր գասակարգի հակառակորդներն են, ուստի և միանգամայն արդարացի յե,



վոր նրանք զրկված են միության անդամ լինելու իրավունքից։ Միության մեջ մանելու իրավունքից զրկված են և այն զործագութերը, վորոնի մինչեվ բորսայում ցուցակագրվելը միտքյան անդամ չեն յեղել։ Կարող ե պատահել, վոր մեզանից վոմանք կառկածեն՝ թե ճիշտ և այս կանոնը թե՛ վոչ. չե՞ վոր այդ զործագուրկները աշխատել են, այսինքն յեղել են աշխատավորներ։ Բայց բանն այն է, վոր թեպետ նրանք յեղել են վարձու աշխատավորներ, սակայն բոլորովին չեն հետաքրքրվել միության գործերով և չեն ցանկացել մանել միութենական ընտանքի մեջ։ Դրանք այն մարդիկն են, վորոնց համար բանվոր գասակարգի կազմակերպությունն առանձին արժեք չունի, միության գոյությունը հիշում են այն ժամանակ, յերբ զործագուրկ են մնում։ Մանելով աշխատանքի բորսան նրանք ձգտում են մի կերպ ընկնել միության մեջ, վորպեսզի ոգտվին այն առավելություններից, վոր արված են միության անդամներին։ Փորձը ցույց է տվել, վոր շատ անգամ գործազրկության քողի տակ թագնվում են վոչ աշխատավոր տարրեր։ Այդ պատճառով ել միությունը չի կարող իր գոները լայն բաց անել այդպիսի մարդկանց սուսած։

Բոլորովին ուրիշ կերպ ե վարդում միությունը այն գործազուրկների հետ, վորոնք միության անդամ են: Նրանք իրենց գործազրկության ամբողջ ժամանակամիջոցում մընում են միության անդամ, բացի այդ ազատվում են անդամավճարներ տալու պարտականությունից և ոգտվում են այն բոլոր առավելություններով, վոր միությունն ստեղծում ե իր գործազուրկ անդամների համար:

Նույն բանը վերաբերում է և այն միության անդամներին, վորոնք ժամանակավորապես կորցել են իրենց աշխատունակություններ. որինակ՝ հիվանդները և այն: Արանք ևս ապահով կերպով մնում են միության մեջ: Սակայն, յերե աշխատունակություններ կորցելուց հետո անցել է



վեց ամսից ավելի ժամանակ, այսինքն՝ յերե կորցել է աշխատունակություններ յեզ արդեն հաւատանամ և դաձել՝ այդ արդեն պատճառ կդաւան միությունից հեռացնելու: Միությունն այդպես ե վարդում, վորովհետեւ նա պաշտպանում ե վարձու աշխատանք տանողների շահերը:

Յեթե բանվորը զադարում ե աշխատել, ապա ուրեմն միության պաշտպանության կարիքն ել չի զգում, մանա-


գանդ, վոր պետությունն ապահովում ե նրան տալիս և թոշակ կամ մշտական նպաստ հաշմանդամության համար

Մեզ մնում ե պարզել, թե ինչու միության մեջ չեն ընդունվում անայնագործները, աշխատանքային կոմունայի անդամները, արտադրականն կոռպերատիվների և աշխատանքային ընկերությունների անդամները, անկախ այն մասից, թե վարձու աշխատանք են գործազրում թե՝ վոշ-

Տնայնագործներն ու արտելի անդամները չեն համապատասխանում միության մեջ մանելու ամենազլխավոր պայմանին. այն եւ նրանք վարձու աշխատանք չեն կատարում, այլ աշխատում են ինքնուրույն կերպով, անտեսավարի: Նրանք մանր աղաներ են, արտադրության միջոցների սեփականատերեր. խանութների, արհեստանոց-



384/1002  
33263



ների տերեր են, վոր աշխատում են կապարով, զանազան պայմաններով մասնակցում են ընկերության շահերին և այն: Արտելի անդամների և տնայնագործների շահերը միանգամայն սարերեվում են վարձու բանվորի սահերից, վորովհետև սրանք շահագրգռված են, վոր իրենց պատրաստած ապրանքը թանկ ծախվի, առևտուր են անում և հաճախ վարձու աշխատանք են ոգտագործում: Տնայնագործներին ու արտելների անդամներին չեն կարող հետաքրքրել միության նպատակներն ու անելիքները: Յեթե նրանք մասնեյին արհեստակցական միության մեջ, ամենալավ գեպքում պիտի ավելորդ բեռ դառնային, իսկ ավելի հաճախ բանվորական կազմակերպության շարքեր քայլայող տարր պիտի զառնային: Անտ թե ինչու միությու-

ՀՀ/Դ/Հ/Հ/Հ  
ԿԱԲԻՆԵՏ  
ЦЕНТР. ПОЛИТПРОСВЕТ

Նը դրանց չի ընդունում իր շարքերը, չնայած, վոր շտա  
անգամ նրանք համառորեն պահանջում են ընդունել իրենց:  
Բացառություն են կազմում այն արհեստավորները, վո-  
րոնք աշխատում են իրենց տանը, կատարում են գործա-  
րանի պատվերները—պատվեր տվողի նյութերով ու  
տանում են վորոշ վարձադրություն կատարած գործի  
չափով: Դրանց ընդունում են միության մեջ, վորովհետե  
խկապես նրանք ել վարձու բանվորներ են և շատ անգամ  
նրանց աշխատանքի պայմաններն ավելի սարսափելի յեն  
լինում քան թե գործարանի բանվորներինը:

Ինչ վերաբերում ե միության մեջ մՏնելու կարգին,  
պիտի ասել, վոր անհրաժեշտ ե միայն մի կամավոր դի-  
մուլ տալ գործարկոմին կամ տեղկոմին, թե՛ ուզում ենք  
մտնել միության մեջ: Գործարկոմը, յերբ ստանում ե  
այդ դիմումը, քննում ե իր հերթական նիստին, ապա  
դնում ե ընդհանուր կամ պատգամավորական ժողովի քըն-  
ությանը, վորը և հաստատում ե ընդունելությունը: Ցե-  
թե վորոնք պատճառով ընդհանուր ժողովը խախտած լինի  
կանոնադրությունը, միությունն իրավունք ունի քանդե-  
ռու այդ վորոշումն ու ընդունելությունը:

## Ի՞նչ է ԿԱՄԱՎՈՐ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես տեսնում ենք, ամեն մի բանվոր ու ծառա-  
յող միության մեջ ե մտնում միանգամայն կամավոր հի-  
մունքներով: Նա իրավունք ունի միության անգամ լինե-  
լու, բայց կարող ե ողտավել այդ իրավունքից ու մտնել  
միության մեջ, կարող ե և չողտավել, միության մեջ չը-  
մտնել: Կամավոր անդամագրության եյտրյունն ել հենց  
այն ե, վոր վոչ-վո՛ զոռով միության մեջ չի հաշում  
բանվորը կամ ծառայողը իր կամքով և վնասում միու-  
թյան մեջ մՏնել քե չմՏնել:

## ԱՐԴՅՈՒՆ ՄԻՇՏ ԵԼ ԿԱՄԱՎՈՐ Ե ՅԵՂԵԼ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Այս կարգը գոյություն ունի սկսած 1922 թվի վեր-  
ջերից: Միության հին անդամները, ի հարկե, հիշում են,  
վոր սազմական կոմունիզմի ժամանակ և ՆեՊ-ի սկզբնական  
շրջանում միության մեջ՝ մտնելու համար չեր պահանջ-  
վում հատուկ դիմում գրել: Այդ ժամանակ ձեռնարկու-  
թյան բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովը  
վորոշում եր, վոր բոլոր աշխատողները պարտավոր կեր-  
պով պիտի միության անգամ լինեն: Ով վոր մտնում եր  
աշխատանքի, գրանով արգեն նա միության անգամ եր  
դառնում: Գործարանի վարչությունն անդամավճարները  
հետ եր պահում աշխատավարձից և հանձնում եր միու-  
թյանը: Քաղաքացիական ծանր կախվերի և տնտեսական  
սուր ավերածության տարիներին, յերբ բանվորներից պա-  
հանջվում եր ավելի համախմբվել ու ծայրահեղ չափով լա-  
րել ուժերը, այդ տարիներին հասկանալի և թույլատրելի  
յեր նման անդամագրության կարգը: Սակայն աստիճա-  
նաբար պարզվում եր, վոր պարտադիր անդամակցությու-  
նը ունի իր պակասավոր կողմերը: Շատ անգամ միության  
անդամները չեյին իմանում իրենց իրավունքներն ու պար-  
տականությունները միության նկատմամբ: Նրանք ան-  
գամավճարը մի տեսակ տուրք եյին համարում ու չեյին  
հետաքրքրվում, թե հավաքած փողերը ինչի համար են  
ծախսվում և գրա հետեւնքով ել այն վնասն եր լինում,  
վոր բանվորները կտրվում եյին միությունից:

Յերբ քաղաքացիական կոիվը վերջացավ և խաղաղ  
շինարարության պայմաններ ստեղծվեցին, այդ ժամանակ  
միությունները, նկատի առնելով պարտադիր անդամա-  
գրության վատ հետեւնքները՝ թողին այդ ձեր և անցան  
այժմյան կամավոր անդամագրության ձեին: Միության և  
իր անդամների միջև յեղած կապն սկսեց ամրապնդվել  
բանվորների մեծ մասը սկսեց գնահատել միության մեջ

լինելու կարեորությունը և նախկին թերություններն ըստ կանոնական վերաբերությունները վոչ թե հիմնարկության կամ ձեռնարկության վարչությունն եւ պահում աշխատավարձից, այլ ինքը՝ միության անդամն անձամբ եւ տալիս տեղկոմին—զործարկոմին, կամ անդամավճար հավաքողին (ընդունակ): Դրա հետ միասին՝ անդամավճարները միության յեկամուտների միակ ալլյուրը դարձան:

### Ի՞նչ ՄԻԶՈՑՆԵՐՈՎ Ե ՊԱՀՈՒՄ ԻՐ ԳՈՅՉՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Առաջ, յերբ գեռ ուազմական կոմունիգմն եր, միություններին դրամական ոգնություն եր ցույց տալիս խորհրդագյին իշխանությունը: Այդ ժամանակ միությունները կատարում եյին պետական աշխատանքների կեսը և իրավունք ունեյին այդ դրամական ոգնությունն ստանալու բացի այդ, բանվոր-ծառայողները քիչ ոռնիկ եյին ստանում և յեղածն ել ստանում եյին բնամթերքով—հացի և այլ մթերափայով (ուստի) դրա համար ել անդամավճարները շատ քիչ եյին ու չեյին կարող ծածկել միություն ծախսերը: Վորպեսզի միութենական կազմակերպությունների թուլանալու առաջն առնի, խորհրդագյին իշխանությունը պետք ե ոգներ միություններին, վորոնք անտեսական քայլքայման ու հեղափոխության թշնամիների գեղ կովելու գործում նրա առաջին ոգնականներն եյին: Նոր տնտեսական քաղաքականությանն անցնելուց հետո դրությունը փոխվեց: Ձեռնարկություններն անցան ինքնամատակարարման և մի շաբթ պարտականություններ, վորագայ միություններն եյին կատարում, այժմ անցան պետության ձեռքը: Մյուս կողմից բավական բարձրացագ աշխատավարձը և արքեց վոչ թե բնամթերքով, այլ դրամով Միություններն սկսեցին իրենց ծախսերը ծածկել անդամավճարների գումարներից:

Միության աշխատանքների համար շատ խոշոր նշանակություն ունեն նրա միջոցները: Միությունը պետք է ուռնիկ տա իր մշտական աշխատակիցներին, պետք է վճարել շենքի, լուսավորության ու վառելիքի վարձը, անհրաժեշտ կահավորություն ու գրասենյակային պիտույքներ պիտի գնի, պետք է տպագրի անդամագրքույկներ, հրահանգներ, կանոնադրություններ, պետք ե գնալ տեղերը, հրագիրել համագումարներ ու կոնֆերանսներ և այն և այն: Այս բոլորի համար, պարզ ե, վոր միջոցներ են հարկավոր: Այս փողը, վոր միությունն ստանում ե վորպես անդամավճար, վերջ ի վերջո վերադարձվում ե նույն անդամներին, բայց ուրիշ կարգով. այսինքն նրանով, վոր միությունը շարունակ ոգնության և հասնում իր գործադուրկ անդամներին, միության բոլոր անդամները ձրիաբար ողտպում են կուլտ-կրթական հիմնարկություններից (ակումբներ, գրադարաններ և այլն) և միությունն իր զանազան տեսակի աշխատանքներով հոգում ե բանվորների կարիքները և թեթևացնում ե նրանց գրությունը:

Անդամավճարի շափը վորոշված ե այնքան, վոր միության անդամները շատ չծանրաբեռնվեն և միաժամանակ այդ գումարներով կարելի լինի միութենական կազմակերպությունների անհրաժեշտ ծախսերը ծածկել: Ինչպես հայտնի յէ, անդամավճարը աշխատավարձի 2 տոկում և կազմում, այսինքն՝ աշխատավարձի ամեն մի ոռորուց 2 կոպեկ: Անդամավճարի տոկոսային կարգը ամենասարդար ձեռվի ե. ով ավելի շատ ոռնիկ ե ստանում, նու ավելի յէ տալիս միությանը: Բացի այդ ամենամոյա անդամավճարից՝ միության անդամը, միության մեջ մտնելու ժամանակ տալիս ե մուտքի վճար, վոր սովորաբար հավասար ե լինում նրա կես որվա աշխատավարձին:

Գործարկումը կամ տեղկոմը իր ստացած փողերից իր սեփական կարիքների համար վոչ մի կոպեկ չի ծախսում, այլ ամբողջովին հանձնում ե միությանը: Ուրեմն

բնչ միջոցներով և գործում ու աշխատում գործարկումը  
կամ աեղկոմը:

**ԳՈՐԾԿՈՄԸ ԻՆՉ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ Ե ՊԱՀՈՒՄ ԻՐ  
ԳՈՅՈՒԹՅՈՒՆԸ**

Համաձայն աշխատանքի որենսպրքի ձեռնարկությունը պարտավոր է գործարկոմին տրամադրել մի սենյակ, լուսավորությամբ և վառելիքով։ Բացի այդ, որենքը պահանջում է, վոր ձեռնարկությունը փորոշ հատկացում անի գործարկոմի ազատ անդամներին ոռճիկ տարու համար։ Այդ ազատ աշխատակիցների թիվը փորոշվում է հատուկ կանոնադրությամբ։ Հատկացումի ճիշտ չափը փորոշվում է հավաքական պայմանագրի մեջ, սակայն չե կարող ավելի լինել բոլոր բանվորներին ուվող աշխատավաճակի շոկուից։ Ասենք՝ թե ըստ պայմանագրի ձեռնարկությունը պարտավորվել է վճարել 2 տոկոս։ Յենթադրենք այդ ձեռնարկությունն իր բանվորներին վճարում է 5.000 ռուբլի աշխատավաճակ։ Այդ գումարի յերկու տոկոսի (առմեն մի ռուբլուն 2 կոպ.) հաշվով ել վճարում է գործարկոմի գանձարկովն—այսինքն 100 ռուբլի։

Ձեռնարկությունից ստացված փողերը գործարկումը ժախսում է ըստ նախահաշվի (մուտքի և յելքի ծրագիր), վորը պիտի հաստատվուծ լինի միության կողմից։ Յեթե նախահաշվի ժամանակը լրանալուց հետո ավել փող և մնում, այդ փողը ծախսվում է ակումբի, «կարմիր անկյան», ընթերցարանի կամ բանվորների ուրիշ կուտակութական կարիքների համար։

**ԻՆՉԻ ՀԱՄԱՐ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԾԱԽՍՎՈՒՄ ՄԻՈՒ-  
ԹԵՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ.**

Ինչպես ասացինք, անդամավճարներն ու մուտքի վճարները միութենական յեկամուտների միակ աղբյուրն

էն։ Միությունը չի կարող առևտրական բնույթ կրող միջոցներ ունենալ, վորմնք կհակասեն նրա նպատակներին և կարող են զցել նրա հեղինակությունը։ Այն գումարները, վոր միությունն ստանում է գործարկոմներից, ծախսում է այն անհրաժեշտ կարիքների համար, վորի մասին վերը խոսեցինք։ Միաժամանակ զբաժի մի մասը հատկացվում է միութենական զանազան ֆոնդերի, ինչպես որինակ՝ գործազուրկներին ոգնելու ֆոնդ, կուլտ-ֆոնդ, գործադուլային ֆոնդ և այլն։ Վորապեազի իր անդամների կարիքները հոգալու համար ավելի շատ միջոցներ ունեն, ամեն մի միություն աշխատում է կրծատել իր ծախսերը—միության աշխատակիցների աշխատավարձը (միության ապարատը) և աշխատում է միութենական աշխատանքի վորոշ մասը կատարել տալ հասարակական աշխատանքի կարգով, վորի համար առաջ և քաշում միության անդամներից ակտիվ բանվորներ։

Միությունը իր բոլոր ծախսերը կատարում է համաձայն առաջուց կազմած նախահաշվի, վորը նախորդը պիտի հաստատված լինի միութենական բարձր որդանիկ կողմից։ Միության գովառական բաժինը իր միջոցների մի մասը հատկացնում է միութենական բարձր որդանին՝ կենտ-վարչությանը և աեղի միջմիութենական մարմնին՝ գավառոֆրյուրոյին։ Միութենական ստորին կազմակերպությունների հատկացումների չափը բարձրերին այնպես և մշակված, վոր գանձված անդամավճարները շատ թե քիչ հավասարաչափ բաշխվեն միութենական ամբողջ ցանցի վրա, համաձայն այս կամ այն միութենական որդանի իրական կարիքների։

Միութենական միջոցները վատնելու և յուրացնելու դեմ կռվելու համար թե գործարկոմում և թե միութենական մյուս մարմններում ընտրվում է զանձապահ, վորը պատասխանատու յե զբաների պահպանման համար։ Միությունները կատարել պայքար են մղում նրանց գեմ, վո-

ըսնք վատնում, կողոպտում են միության առանց այն ել աղքատիկ միջոցները և վարկաբեկում են մեր արհեստակեցական շարժումը:

### Ի՞նչ է ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԸ

Ներկայումս անդամավճարը—միության դրամական հիմքը—մենք մուծում ենք գործարկոմ, կամ տալիս ենք անդամավճարների հավաքարարին անձամբ, ամեն մեկո առանձին, ուրիշ խոսքով ասած՝ անհատութեն (անհատորեն նշանակում ե անձամբ): Հավաքարարները կամ գործարկոմը ստանում են միության անդամի անդամավճարը՝ ըստ նրա աշխատավարձի և անդամագրույկի մեջ նշանակում են, վոր անդամավճարն ստացված ե: Այս ե անդամավճարի անհատական ձեռվ գանձելու յեղանակը, վորն ընդունվեց մեզ մոտ քաղաքացիական կոիմսերը վերջանալուց հետո:

### ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆ ԱՆՀԱՏՈՒԹԵՆ ԳԱՆՉԵԼՈՒ ՅԵՂԱՆԱԿՆ Ի՞նչ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՍԱՅԻՆ ԿԱՐԵԼՈՒ ՏԵՍԱԿԵՏԻՑ

Առաջներում՝ անդամավճարը ոռծիկից հետ եր պահում հիմնարկության կամ ձեռնարկության գրասենյակը՝ ինչպես ստացինք, այդ ձեր վատ եր, վորովհետեւ միության անդամներից շատերը չեյին իշանում, թե իրենցից ինչքան են անդամավճար պահում, ինչ կարիքների համար են վերցնում այդ անդամավճարը և դրա համար ել նրանք չեյին հետաքրքրում միությունով, կտրփում եյին նրանից: Յերբ սահմանվեց կամավոր անդամագրություն, այն ժամանակ անհրաժեշտ գարձավ և անդամավճարի անհատական գանձման ձեր, վորովհետեւ առանց դրան կամավոր անդամագրությունն ել վոչ մի միտք չեր ունենա: Յերբ բանվորը կամ ծառայողը անհատորեն մուծում ե իր

անդամավճարը, դա արդեն ապացույց ե, վոր նա ցանկանում ե մնալ միության մեջ: Անդամավճարների անհատութեն գանձման ձեին անցնելիս միություններն առանձնապես դժվարություններ չքաշեցին, միութենական մասսան ցույց տվեց, վոր նա գիտակից ե և հասկանում ե միության խնդիրներն ու նրա բռնած նոր գիծը: Այժմ, յերբ բանվորը ինքն անձամբ մուծում ե իր անդամավճարը, նա իրավունք ունի միությունից հաշիվ պահանջելու, թե իր տված փողերը ինչի համար են ծախսվում: Նա արդեն սկսել ե հետաքրքրվել միության աշխատանքներով, սկսել ե նկատողություններ, դիտողություններ անել, խորհուրդներ տալ, լավ աշխատանքի համար գովել խրախուսել, վատի համար նախատել, պատասխանատվության կանչել մի խոսքով նա սկսել ե միութենական կյանքով ապրել:

Ան հենց այս ե ամենակարեւրն ու ամենաարժեքավորը, վորովհետեւ միությունը միայն այն ժամանակ կարող ե իր աշխատանքները, իր խնդիրներն իրագործել, յերբ վոր շատ լավ կիմանա իր անդամների կարիքներն ու պահանջները և յերբ մասսան ինքը ամեն կերպ կոդնի ու կոժանդակի միության աշխատանքներին: Այսպիսով ուրեմն, անդամավճարն անհատորեն մուծելու հետեւ վանքով անտապնդվում յեվ առողջանում ե բանվորի ու միության կապը: Բացի այդ, նա առողջացնում ե յեվ միութենական ամբողջ աշխատանքից: Յերբ անդամավճարներն այդ ձեռվ են գանձվում, միությունը պիտի իր աշխատանքներն ավելի մոտեցնի մասսաներին, ավելի հաճախ հաշիվ տա նրանց առաջ և բազարարի մասսաների կարիքները: Անդամավճարն անհատորեն մուծելու ժամանակ, յեթե բանվորները համոզվեն, վոր միությունը շատ վատ ե աշխատում, իրենց վոչ մի ոգուտ չի տալիս, դրամական հաշվետվություն չի ներկայացնում, այդ դեպքում նրանք պարզապես կսկսեն դուրս դալ միությունից: Այս-

պիտի ուրեմն, անհատական մուծումը մի խթան և միության համար, մի խթան, վոր ստիպում և աշխատանիները մասսականացնել, ամուր կապ սեղծել մասսաների հետ։ Դրա համար եւ միությունների վերջին համագումարը անհրաժեշտ համարեց վճռական պայքար մղել վոր անդամավճարները գործարանային վարչությունների միջոցով գանձելու դեպքեր չլինեն։

Կամավոր անդամագրության և անդամավճարն անհատորեն մուծելու կարգը ընդունելով՝ միություններն ուժեղացել են։ Դա յերեսում է նրանից, վոր անդամագրության ու անդամավճար մուծելու այդ կամավոր ու անհատական ձերին անցնելուց հետո, յերեք տարվա ընթացքում (1923 թ.—1925 թիվ) բոլոր միությունների անդամների ընդհանուր թիվը աճել է 4,547,000-ից—6,960,000 հոգի, այսինքն՝ յերեք տարվա ընթացքում ավելացել են 2,403,000 հոգի։

#### ԻՆՉՈՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե, ՎՈՐ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՄԵՆ ՄԻ ԱՆԴԱՄ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԿԵՐՊՈՎ ՄՈՒԾԻ ԻՐ ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԸ

Անհատական մուծումը ամեն մեկիս վրա պարագ և գնում՝ կանոնավոր ու կարգավան կերպով մուծել մեր անդամավճարները։ Միությունն իր գրամական հաշիվները կազմում է այն հույսով, վոր անդամավճարներն իր ժամանակին ու կանոնավոր պիտի ստացվեն։ Այդ մուծումների ամենափոքր ընդհատումը քանդում է միության հաշիվներն ու թուլացնում նրա ամբողջ աշխատանքը, իսկ դա, ի հարկե, միության անդամներին ձեռնոտու չի։ Անդամավճարը կանոնավոր չմուծելու պատճառը շատ անգամ մեր անդութությունն ու անհոգությունն է, իսկ յերբեմն ել մեր անդիտակից լինելը։ Միության զիտակից անդամը ամեն ամիս, սոսնիկն ստանալուն պես, առանց ուշացնելու պիտի մուծի իր անդամավճարը։ Միու-

թյան բոլոր անդամները պիտի աշխատեն ու ձգտեն այդպես լինել։ Միության կանոնագրության համաձայն, այն անդամները, վոր յերեք ամիս շարունակ առանց հարգելի պատճառի չեն մուծում իրենց անդամավճարը, դրանք համարվում են միությունից հեռացված։ Յեկ հենց հախն այդպիսի անդամները պարզ էլ պիտի անել, վորովհետեւ այդպիսի անդամները վոչ միայն կտրվում են միությունից, այլ և ուղարկվելու իամակարում են միութենական աշխատանքներին։

#### ԻՆՉՈՐ ՊԻԾԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԸ ՅԵՆԹԱՐԿՎԻ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԴԻՍՑԻՊԼԻՆԱՅԻՆ

Բանվորների կազմակերպությունը միության աշխատանքի հաջողության ամենալավ գրավականն է։ Շատ զեղեցիկ ու հրաշալի կանոնագրություն կարելի յե կազմել, բայց միությունը կտրող է լավ աշխատել, իր խնդիրները ձիշտ ու հաջող գնել միայն այն ժամանակ, յերբ միության բոլոր անդամները խորապես կդիտակցեն, վոր անհրաժեշտ է անպայման, առանց առակուրյունների յեւրակիթի կանոնադրույան բոլոր կետերին ու միության բոլոր վորումներին։ Ամրակուռ և միայն այն միությունը, վորն ունի, դիսցիպլինա, վորի միջոցով ել միության ցրված անդամներին համախմբում ու ամրապնդում է մի ուղմանակ ու նզոր կազմակերպուրյան մեջ։ Դիսցիպլինա զոյություն ունի միութենական ամբողջ ցանցի մեջ։ Միութենական բարձրագույն մարմինները մասսաների կողմից լիազորված են զեկավարելու միութենական աշխատանքները, գրա համար ել, նրանց վորոշումները պարտագիր են բոլոր ստորին մարմինների ու արհմիությունների բոլոր անդամների համար։ Ինչպես հայտնի յե, ընդհանուր ժողովներում հարցերը վճռվում են ձայների պարզ մեծամասությամբ, յերբ ավյալ հարցի մասին արտահայտվել են բոլոր ցանկացողները։ Ժողովին մասնակցողների մե-

ծամասնության վորոշումը պարտադիր ե բոլորի համար, վորոնց թվում և փոքրամասնության համար։ Միության ամեն մի անդամ վոր կարգապահ ե ու հասկանում ե գիտակալինան, կյենթարկվի այդ վորոշումներին՝ հանուն միութենական կազմակերպության շահերի։ Հարկավոր ե, վոր միության անդամը, հարկ յեղած դեպքում կարողանա իր անձնական շահերն ու ցանկությունները զիջել ընդհանուր դասակարգային գործի շահերին։ Միությունն ամենից առաջ աշխատում ի իր անկարգապահ, անդիտագլիքն անդամի վրա ազդել դաստիարակչական-կրթական միջոցներով, բայց յերբ այդ միջոցները չեն ազդում և յերբ այդ ընկերոջ անկարգությունը կազմակերպությանը վնաս է հասցնում, այդ դեպքում, ընդհանուր ժողովի վորոշամբ կարելի յե այդ անդամին նեռացնել միությունից։

### ԻՆՉՈ՞Ի ՊԻՏԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԸ ՀԱՃԱԽԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԻՆ

Միության կարգապահ անդամը կաշխատի առանց հարգելի պատճառի բաց չթողնել և վոհ մի ընդհանուր ժողով։ Ծննդանուր ժողովը—դա մեր ամենաառաջին կազմակերպիչն է։ Ընդհանուր ժողովներում վճռվում են միութենական կյանքի հիմնական հարցերը, ընտրվում ե գործարկոմ, ընտրվում են կոնֆերենցիաների ու համագումարների պատճառավորներ, վորոնց մասսան վստահում ե ընտրել միութենական բարձրագույն մարմինները։ Ընդհանուր ժողովներում լսվում ե գործարկոմի հաշվետվությունը՝ իր աշխատանքների մասին, նոր անդամներ են ընդունվում, կամ հեռացումներ կատարվում։ Յեթե ընդհանուր ժողովները սակագամարդ ու անգործունյա լինեն, կամ ինչպես ասում են, քիչ ակտիվ լինեն, ապա իսկույն կարելի յե ասել, վոր միութենական մասսան չի ոգում միութենական աշխատանքներում միութենական աշխատանքների մասին ակտիվ կարգությունները, այսինքն՝ կյինեն ակտիվ։ Միության անդամները անպատճառ պիտի ոգագործեն իրենց իրավունքները այն ե՝ քննեն ու վճռեն միութենական խնդիրները, վորապես միության աշխատանքների ուղղվեն համաձայն իրենց կարիքների։ Միության ակտիվ անդամը, առողջ

և իր դիտողություններով չի ոգնում միությանը։ Այստեղից արգեն պարզ ե, թե ինչու վերջին ժամանակներու միութենական դեկավար կազմակերպությունները այնքան մեծ ուշագրություն են դարձնում ընդհանուր ժողովներն աշխատանքներու և բանվորական լայն մասսաներին այդ ժողովներին մասնակից դարձնելու հարցի վրա։

### ԻՆՉՈ՞Ի ՊԻՏԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԸ ԱԿՏԻՎ ԼԻՆԻ

Ի հարկե, բավական չե ընդհանուր ժողովներին լուսու ու անձայն ներկա լինելը։ Պետք ե, վոր այդ ներկայությունից մի ոգուտ լինի, իսկ ոգուտ կլինի այն դեպքում, յերբ միության անդամները ակտիվություն կցուցաբերեն, այսինքն՝ ակտիվ կերպով կմասնակցեն ժողովի աշխատանքներին։

Միության ակտիվ անդամը հասարակ դիտող ու լսողի դերում լինել չի կարող, նա չի կարող չմասնակցել միութենական կյանքի անց ու դարձին, բոլոր խնդիրներին։ Ընդհակառակը, ակտիվ անդամը խորանում է կազմակերպության բոլոր մանաւանդությունների մեջ, զիսակցուեն մասնակտությունների բոլոր հարցերին։ Զե վոր միության ամեն մի անդամ ամբողջովին շահագրգոված ե, վոր միությունը վորքան կարելի յե լավ աշխատի։ Իսկ դա հնարավոր ե այն ժամանակ, յերբ միության բոլոր անդամները կակսեն մասնակցել ու արտահայտվել ընդհանուր ժողովներում, միութենական վորեկ պարտականություն, վորեկ աշխատանք կվերցնեն, ամեն կերպ կողնեն միությանը՝ վերացնել իր բացերն ու թերությունները, այսինքն՝ կյինեն ակտիվ։ Միության անդամները անպատճառ պիտի ոգագործեն իրենց իրավունքները այն ե՝ քննեն ու վճռեն միութենական խնդիրները, վորապես միության աշխատանքների ուղղվեն համաձայն իրենց կարիքների։ Միության ակտիվ անդամը, առողջ

նաղատելով միության աշխատանքը, թերությունները վերացնելու համար խելացի ու նպատակահարմար առաջարկներ անելով և միության բոլոր վորոշումներին մասնակցելով ոգում և միությանը՝ կարգափորել իր խնդիրները և ավելի հեշտ կերպով լուծել առաջադրված հարցերը։ Միութենական կազմակերպություններն եւ իրենց հերթին, առաջ են քաշում ակտիվ անդամներին. ոգտագործում են նրանց ուժերը, համախմբում են նրանց միության շուրջը և այդպիսով ամրապնդում են միությունը։

Սյու բանը ընկ. կենինը արտահայտել է հետեւյալ նախադասությամբ. «Վորպեսզի հաջողությամբ կատարեն իրենց խնդիրները՝ արհեստական մրությունները նույն յել առաջ պիտի դառնան այնպիսի կազմակերպություններ, վորոնց ամեն մի առանձին անդամը գիտակցութեն ու ակտիվ կերպով մասնակցի մրության ընթանուր կյանքին...» Միության անդամի անակտիվությունը նրա անգիտակից լինելու հետեանքն է, բայց ի հարկե, զրա համար չի կարելի հեռացնել միությունից, ինչպես որինակ՝ հեռացնում են անկարգապահ, անդիսցիպլին անդամին։ Սակայն և այնպես, անակտիվությունը և սակավ ակտիվությունը մի չարեք ե, վորի դեմ մենք պիտի ամեն կերպ պայքարենք։

## Ի՞նչ ԴԵՐՔՈՒՄ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԸ ԿԱՐՈՂ Ե ՀԵՌԱՑՎԵԼ ՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ

Միությունից հեռացվում են նրանք, վորոնի խախտում են կանոնադրությունը, համառուեն չեն յենթարկվում մրութենական դիսցիպլինային յեվ յերեք ամիս շարունակ, առանց հարգելի պատճառի չեն մուծում իրենց անդամակարդարը։ Բացի այդ, ըստ կանոնադրության հեռացվում են և նրանք, ովքեր քենական հանցանի են զարգել յեվ գտնվում են դատի տակ։

Անկարգապահության և կանոնադրությանը չյենթարկվելու համար միությունից հեռացվում են բացառիկ դեպքերում, ազգելու և ուղղելու մյուս բոլոր միջոցներն սպառելուց հետո (բացատրել պարզաբանել, նախազգուշացնել և այլն) և անհերելի, անթույլատրելի քայլի համար։ Միությունը ձգտում է ամեն հսարավոր բան անել, վորպեսզի բանվորական լայն մասսաներին բացատրի իր ամբողջ գործունեյությունը և հենց գրանով վերացնի միության առանձին անդամների սխալները։

## Ի՞նչ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀԵՌԱՑՎԱԾԻՆ ԿԱՐԵԼԻ ՅԵՌԸՆԴՈՒՆԵԼ

Միության անդամությունից վորեւ մեկին հեռացնում է ընդհանուր ժողովը, հաստատում է միութենական բարձրորդանը և այդ կարող է կատարվել վորու ժամանակով, վորի լրանալուց հետո հեռացվածը կարող է խնդրել, վոր իրեն ընդունեն միության մեջ ընդհանուր հիմունքներով։

Վերընդունվածի հին պրոֆստաժը չի հաշվվում, վորովհետև հեռանալու դեպքում կարող են սխալներ պատահել, ուստի բոլոր հեռացվածներին իրավունք է արդիում բողոք ներկայացնել միութենական բարձրագույն մարմիններին։

## ԱՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1) Ի՞նչու մինչև հեղափոխությունը բոլոր վարձու աշխատանք կատարողները չեյին մտնում միության մեջ։

2) Ի՞նչի՞ մասին ե հոգ տանում միությունը և վորն ե նրա վերջնական նպատակը։

3) Ի՞նչու յե միությունը աշխատում բանվորին վարժեցնել հասարակական աշխատանքի մեջ։

4) Ի՞նչու միությունը ԽՍՀՄ-ի բոլոր քաղաքացիներին իր շարքերը չի առնում։

- 5) Ինչու միությունը չի կարող գոյություն ունենալ առանց դրամական միջոցների:
- 6) Վերն և միության մեջ մտնելու կարգը:
- 7) Ո՞վ է հավաքում անդամավճարները, ո՞վ և ինչի՞ն համար է ծախսում և այլն:
- 8) Գործարտեղկոմը իր կարիքների համար վորտեղութեան և փող վերցնում:
- 9) Անդամավճարներ գանձելու կարգը ինչպես և ազգություն միության և նրա անդամների կապի վրա:
- 10) Ի՞նչ կլիներ միության աշխատանքը, յեթե նրա անդամները անդիսցիպլին լինելին:
- 11) Ինչու պետք է կանոնավոր կերպով հաճախել ընդհանուր ժողովներին:
- 12) Ի՞նչ ոգուտ են տալիս միության ակտիվ անդամները:
- 13) Ի՞նչի համար են հեռացնում միությունից:



ԳԻՒՆ Ե 25 ԿՈՊԵԿ

331. 881

Դ-99